

**ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի մամուլի հաղորդագրությունը  
կորոնավիրուսի ախտորոշման տեղական թեստերի արտադրության վերաբերյալ**

Հարգելի լրագրողներ,

Ապրիլի 9-ին, ժամը 13:00-ին հրավիրում ենք ձեզ մամուլի ասուլիսի, որը կվարի **ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների թեկնածու Արսեն Առաքելյանը:**

Ասուլիսը տեղի է ունենալու հեռավար ձևաչափով /on-line/ ԳԱԱ հեռավար հարթակում, որին դուք կարող եք միանալ անցնելով հետևյալ հղումով՝ <https://meet.asnet.am/b/ars-f23-wme> :

Access Code: 839159

Հաշվի առնելով կորոնավիրուսի զանգվածային թեստավորում իրականացնելու ՀՀ կառավարության կողմից դրված գերակա խնդիրը՝ ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը հանդես է եկել Հայաստանում ախտորոշիչ թեստեր արտադրելու առաջարկով: Ինչպես ավելի վաղ նշել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, այդ նպատակով ՀՀ Կառավարությունը կատարելու է ֆինանսական հատկացում:

Արտադրությունը հիմնված է լինելու արդեն հայտնի տեխնոլոգիայի վրա, որի համար անհրաժեշտ հումքը/նյութերը հնարավոր է ձեռք բերել: Այդ նպատակով ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը բանակցում է մի շարք արտադրողների հետ: Թեև այդ նյութերի պակաս աշխարհում չկա, բայց կա թեստերի դեֆիցիտ, և յուրաքանչյուր երկիր այսօր փորձում է լուծել իր ներքին պահանջարկը բավարարելու հարցը:

Թեստերը նախատեսված են լինելու պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդով ախտորոշման համար, որը գենետիկական հետազոտություն է և ներկայումս օգտագործվում է կորոնավիրուսի ախտորոշման համար ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի կողմից:

Նախաձեռնության նպատակն է լուծել մի քանի խնդիր.

1. ստանալ մատչելի ախտորոշիչ թեստեր,
2. կազմակերպել թեստերի դեֆիցիտի պայմաններում բավարար քանակով անխափան մատակարարում,
3. շահել ժամանակ, որն այս գործում կարևոր է:

Այս պահին ՀՀ կառավարությունը ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հետ քննարկում է թեստերի տեղայնացման արտադրության նախապատրաստական և ֆինանսական կազմակերպչական հարցերը:

Միաժամանակ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում իրականացվում են ենթակառուցվածքի նախապատրաստական աշխատանքներ:

Հարկ է նշել, որ ինստիտուտն ունի արտադրությունը սկսելու գիտական և տեխնիկական բավարար ներուժ: Հետազոտությունների մեծ մասում օգտագործվում են ՊՇՌ մեթոդները (այդ հետազոտությունները տպագրվում են միջազգային վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում և հանրամատչելի են): Ուստի այս կամ այն գիտական հետազոտության համար նոր թեստերի մշակումը և օպտիմիզացիան ինստիտուտի գիտական անձնակազմի ամենօրյա գործառույթներից մեկն է, և այդ փորձառությունը, անշուշտ, կապահովի արտադրության անխափան աշխատանքը:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի մասին մանրամասն կարող եք իմանալ այցելելով` <http://www.molbiol.sci.am/> կայք:

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրինություն

Հետադարձ կապ` [arakelyan@sci.am](mailto:arakelyan@sci.am)